տէրանց Վենետաց պիտի սկսի մեր փրկութիւն եւ ազատութիւն: Կուղարկեմք մեր պատրիարքը Ստեփաննոս շատ պատճառաց համար առ մեծապայծառ տէրութիւն ձեր, որ յարգութիւն ընծայէ ձեզ եւ յետոյ շնորհք ընէք իրեն, որ կարնեայ երթալ եւ համբուրել զոտս ամենասրբազան Պապին»2):

Անշուշտ, նման աղերսագրեր հայոց կաթողիկոսը ներկայացրել էր նաեւ միւս արքունիքներին: Բայց դժվարաբար նրանք մնացին «ձայն բարբառոյ յանապատի»: Եւրոպական պետութիւններից ո՛չ մէկը չկամեցաւ օգնութեան ձեռք մեկնել ասիական բարբարոսութեան ճիրաններում խեղդուող հայութեանը: Անգամ թշուառների անունից խօսող եւ արքայութեան դռները բացող Պապը խուլ դռնուեց հայ ժողովրդի ճիչերի հանդէպ եւ մատը մատին չխփեց:

3·

Զարմանալին այն է, որ նոյն այդ քաղաքականութիւնը որդեգրեց նաեւ Ստեփաննոսի յաջորդն ու աթոռակիցը, Միքայէլ Սեբաստացի կաթողիկոսը:

Սա՛ եւս ճանապարհ ընկաւ դէպի Արեւմուտք՝ պետութիւնների փակ դռները իր հօտի փրկութեան համար բախելու: Հասաւ մինչեւ Սեբաստիա, բայց դէնն անցնել չկարողացաւ: Հարկադրուած մի գաղտնի պատգամաւորութիւն ուղարկեց Եւրոպա (1562 թ·) — բաղկացած երեք հոգուց՝ Արգար դպիր Եւդոկիացի, որդին Սուլթան եւ Աղեքսանդր անունով մի քահանայ: Պատգամաւորութիւնը առաջին հերթին պիտի դնար Հռոմ, Պապի մօտ, կաթողիկոսի նամակով եւ ընծաներով:

Անցաւ մէկ ամբողջ տարի եւ սակայն կաթողիկոսը ո՛չ մի լուր չստացաւ պատգամաւորութեան մասին: Անգամ չգիտէր՝ տեղ հասել է՞ր նա, թէ՞ ոչ:

Յաջորդ տարին նորից մի նամակ գրեց Պապին, նամակի սկզբում դնելով ինչ որ խորհրդաւոր ծածկագիր, որ միայն Արգարը կարող էր վերծանել: Ողջոյնից եւ սովորական քաղաքավարական արտայայտութիւններից յետոյ՝ կաթողիկոսը յոյս էր յայտնում՝ Պապի օգնութեամբ «ընդ հուպ ակն ունել ազատութեան ի գերութենէ աստի»:

Ապա աւելացնելով, որ «երկիւղ պաշարեալ է զմեզ ո՛չ միայն յարտաքնոց, այլ եւ ի չար քրիստոնէից», ուստի եւ «ձեռք մեր ամփոփեալ են եւ լեզուք մեր կարկամեալ ի մէջ այլակրօնից, որոյ վասն իսկ ո՛չ գիր նամակի եւ ո՛չ ընծայս նուիրաց արժանի ձերումդ սրբութեան մարթ է մեզ յղել»: Դրա համար էլ խնդրում է Պապին՝ ընդունել Արգարին — եթէ տեղ հասել է — որպէս իր ներկայացուցիչը· «նա ինքն եղեցի որպէս բերան մեր»:

Միանգամայն պարզ է ուրեմն, որ Միքայէլ կաթողիկոսի նամակներն եւս — ինչպէս նաեւ Արգարի պատգամաւորութիւնը — քաղաքական նպատակներ ունէին, այլ ո՛չ կրօնական, երկու եկեղեցիների միացման — ինչպէս ուզում է մեզ հաւատացնել Զամչեանը:

Եթէ այդ այդպէս չլինէր, հակառակ դէպքում նախ՝ նամակում ծածկագրերն աւելորդ էին: Երկրորդ՝ կրօնական խնդրի համար ամենեւին հարկ չկար գանգատուելու, որ իրենց լեզուները կարկամած են եւ ձեռները կարճ թշնամիների երկիւղից եւ որ իրենք շուտափոյթ ազատութեան են սպասում իրենց գերութիւնից:

Արգարը Հռոմում ներկայանում է Պապին եւ բացատրում իր առաքելութեան նպատակը: Սակայն Պիոս Դ· Պապը ո՛չ ցանկութիւն ունէր հայկական հարցով զբաղուելու եւ ո՛չ էլ ի վիճակի էր որեւէ դրական քայլ այդ ուղղութեամբ անելու: Նրա ամբողջ ուշքն ու միտքը կլանուած էին պապական աթոռը եւ կաթոլիկ եկեղեցին բարեկարգութեան (reformation) հարուածներից պաշտպանելու մտահոգութեամբ:

Սակայն եւ այնպէս կամենալով օգտուել հայերի նեղ դրութիւնից եւ գտնոր ջրում ձուկ որսալ, մի փորձ փորձեց երկու եկեղեցիների միութիւնը գլուխ բերելու: Առաջարկեց Արգարին՝ գրել հայոց եկեղեցու դաւանութիւնը եւ ներկայացնել իրեն, որը եւ կատարուեց:

Վերջ ի վերջոյ Արգարի բանակցութիւնները յանգեցին այնտեղ, որ հայ ժողովրդի «հոգու փրկութեան» համար Հռոմում բացուեց

2) Ալիշան՝ «Հայ Վենետ·», 1896 թ· եր· 329· Լէօ՝ «Հայկ· Տպագր·» Ա· եր· 49: